ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Միքայել Հենրիխի Ավանեսյանի «Թուրքիայի աշխարհառազմավարության էներգատրանսպորտային գործոնը Մեծ Մերձավոր Արևելքում. փոխակերպումները և նոր մարտահրավերները» ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսության մեջ դիտարկվում են Մեծ Մերձավոր Արևելքում Թուրքիայի հիմնական էներգատրանսպորտային աշխարհառազմավարական նախաձեռնությունները: Թուրքիայի էներգատրանսպորտային աշխարհառազմավարության դիտարկումը բավական արդիական առարկա է ոլորտային ինքնիշխանության առանցքային սկզբունքները ըմբռնելու ու ճիշտ գնահատելու համար: Ելնելով տարածաշրջանային մարտահրավերներից և ռիսկերից՝ ատենախոսության թեման ուղղակիորեն շոշափում է Հայաստանի ազգային շահերը: Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև Հայաստանի էներգետիկ ու տրանսպորտային անվտանգության մարտահրավերներով, վերջին երեք տասնամյակներում տնտեսական ու հաղորդակցային շրջափակումից դուրս գալու հնարավորությամբ: Ատենախոսը անդրադառնում է ոչ միայն Թուրքիայի էներգատրանսպորտային աշխարհառազմավարության գործնական ներկայացման հիմնախնդիրներին, այլև հայկական գիտական հանրության համար կարևորություն ներկայացնող հեռանկարներին:

Հատկանշական է, որ ատենախոսության հեղինակը առանձնացնում է էթատիզմի գործոնը աշխարհառազմավարական նախաձեռնությունների ձևավորման գործում, սակայն դրան հավասար նշում է Թուրքիայի տնտեսության մեջ մասնավոր հատվածի դիրքերի ուժեղացումը: Ատենախոսության հեղինակը կարողացել է համադրել Թուրքիայի ներքին և արտաքին էներգատրանսպորտային քաղաքականությունը, ինչպես նաև հավուր պատշաճի ներկայացնել պետական ռազմավարությունների հետ կապված առկա առանձնահատկությունները:

Հարկ է նաև նշել, որ հետազոտության շրջանակներում հեղինակը բազմիցս կիրառում է «էներգետիկ ֆեդերալիզմ» եզրույթը՝ «ցանցակենտրոն ռազմավարության» քաղաքագիտական մեկնաբանությամբ, ինչն իրենից բավականին եզակի գիտական փորձ է ներկայացնում:

Վերլուծվել են «Արդարություն և զարգացում» կուսակցության էներգետիկ և տրանսպորտային ուղենիշների ձևավորման առանձնահատկությունները՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուի կողմից հեղինակված «Ռազմավարական խորություն. Թուրքիայի միջազգային դիրքը» աշխատության համապարփակ ուսումնասիրման հիման վրա: Այս առանձնահատկությունների համակցությունն ընդգծում է ատենախոսության արդիականությունը և կարևորությունը քաղաքագիտական հետազոտությունների շրջանակներում:

Կարելի է արձանագրել, որ ատենախոսությունում համակողմանիորեն լուծվել են հետազոտության նպատակից բխող խնդիրները, ինչը թույլ է տվել ներկայացնել կարևոր գիտական ու կիրառական նշանակություն ունեցող եզրակացություններ:

Ատենախոսությունն առանձնանում է հետազոտական հիմնախնդիրների շարադրման հետևողականությամբ և հիմնավորվածությամբ: Ատենախոսությունը շարադրված է գրագետ, ունի հստակ տրամաբանական կառուցվածք և հանդիսանում է հեղինակային ինքնուրույն հետազոտություն: Ուսումնասիրելով թեմային վերաբերվող ծավալուն գրականություն՝ ատենախոսը կարողացել է համակողմանիորեն վերլուծել էներգատրանսպորտային գործոնը Թուրքիայի աշխարհառազմավարության մեջ:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ու աղբյուրների ցանկից: Առաջին գլխում կատարվում է պատմական իրադարձությունների որակական վերլուծություն, ուսումնասիրվում են էներգատրանսպորտային լիբերալիզմի և նեոլիբերալիզմի կիրառման առանձնահատկությունները և հանգուցային ռազմավարության ձևավորումը: Համեմատական մակարդակում ներկայացվում է պետական ռազմավարական փաստաթղթերում առկա մոտեցումները և դրանց իրականացման կարևորությունը Մեծ Մերձավոր Արևելքում:

Երկրորդ գլխում դիտարկվում են Թուրքիայի էներգատրանսպորտային համակարգի զարգացման հիմնական ուղղությունները, դիտարկվում են ածխածնի

աղբյուրների, ներառյալ նավթի և գազի դինամիկ օգտագործման հիմնական առանձնահատկությունները, Թուրքիայի ծովային տարածքի շուրջ տնտեսական գոտիների զարգացումը և դրանց տրանսպորտային ու լոգիստիկ բաղադրիչները: Առանձին դիտարկվել է Թուրքիայի միջուկային էներգետիկան, ուսումնասիրվում են միջուկային տեխնոլոգիաների նորարարություններն ու հեռանկարները:

Երրորդ գլխում ուսումնասիրվում են Թուրքիայի աշխարհատնտեսական զարգացման հեռանկարները Մեծ Մերձավոր Արևելքում, վերահիմաստավորվում են Սիրիայում և Լիբիայում Թուրքիայի էներգատրանսպորտային ազդեցության աշխարհաքաղաքական նախաձեռնությունները, ինչպես նաև Կասպից ծովի կարևորությունը: Բացի այդ, գնահատվում են պանթյուրքիզմի գաղափարախոսության առանձնահատկությունները Կենտրոնական Ասիայում՝ Թուրքիայի ժամանակակից աշխարհատնտեսական քաղաքականության ծիրում: Եզրակացության մեջ շարադրված են հետազոտության հիմնական արդյունքները, ներկայացված են ամփոփ թեզերը և որոշակի առաջարկություններ:

Ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից և բացթողումներից: Առանձնացնենք դրանցից ամենակարևորները:

1. Ատենախոսության հեղինակը երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում անդրադառնում է Թուրքիայում միջուկային տեխնոլոգիաների զարգացման տարբեր հեռանկարներին: Սակայն պարզ չէ, թե ինչու "խաղաղ" և "ռազմական" ատոմի օրակարգը դիտարկելիս հեղինակը շրջանցում է վերջին գործոնը: Պարզ է, որ Թուրքիան մշտապես մեծացնում է սեփական ռազմավարական ներուժը, ինչը պայմանավորված է Իրանի միջուկային ծրագրով և Թուրքիայում ՆԱՏՕ-ի ոչ կոնվենցիալ ներուժի կրճատմամբ, ինչը Թուրքիայի համար որոշակի ռիսկեր է ձևավորվում: Կարծում ենք, որ միջուկային զենքի առկայությունը դիտվում է Անկարայի կողմից ազգային շահերի տիրություն, իսկ դրա մշակումը կարող է առաջիկայում առաջնահերթություն դառնալ Թուրքիայի համար:

2. Ատենախոսության 46-47-րդ էջերում դիտարկվում է Թուրքիայի արդի ռազմական աշխարհառազմավարությունը, որում Թուրքիայի էներգափոխադրման ներուժն առաջնային դեր է խաղում ըստ Ջ.Յայիջիյի (որը հանդիսանում էր Թուրքիայի Ռազմածովային ուժերի փոխադմիրալ): Այնուամենայնիվ, Թուրքիայում ռազմական

իշխանության ազդեցության կրճատումից հետո անհասկանալի է մնում ուժային կառույցների դիրքը որոշումների կայացման գործում: Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը անդրադառնար Թուրքիայում իշխանության տրանսֆորմացիայի, ինչպես նաև էլիտայի համակարգի փոփոխության խնդիրներին:

3. Ատենախոսության հեղինակը որոշակիորեն մակերեսորեն է անրադարձել Մեծամորի ատոմակայանի շահագործման խնդիրներին: Մինչդեռ հայտնի է, որ Թուրքիայի աշխարհառազմավարական ջանքերը վերջին տասնամյակում ուղղված են ոչ միայն Հայկական ԱԷԿ-ի կոնսերվացմանը, այլև ընդհանրապես՝ ատոմային էներգետիկայի ոլորտի զարգացման զսպմանը ՀՀ-ում:

4. Անվիճելի է ատենախոսի այն մոտեցումը, որ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը անհրաժեշտ է գնահատել նաև ռազմաաշխարհագրական չափման մեթոդների կիրառմամբ: Այսպես, 80-82-րդ էջերում հեղինակը անդրադառնում է վերազգային կառույցների աշխարհաքաղաքական տարբեր հայեցակարգերին, սակայն պատշաճ չափով չի բացահայտում կողմնակի ռիսկերն ու մարտահրավերները: Օրինակ, Կենտրոնական Ասիայի երկրները ակտիվորեն համագործակցում են Չինաստանի հետ ("Մեկ գոտի, մեկ ճանապարհ" նախագծի շրջանակներում, Շանհայի համագործակցության կազմակերպություն) և ԱՄՆ-ի հետ (C5+1 բլոկում): Ցանկալի կլիներ, որ հեղինակը նշեր որոշ առճակատման ասպեկտներ, որոնք խաթարում են Թուրքիայի էներգատրանսպորտային աշխարհատնտեսության ցանցակենտրոն համակարգը ռազմական տեսանկյունից:

5. Ցանկալի կլիներ, եթե ատենախոսության հեղինակը ուշադրություն դարձներ նաև Թուրքիայի հարևան երկրների, մասնավորապես՝ արաբական աշխարհի երկրների էներգատրանսպորտային քաղաքականության առանձնահատկություններին՝ վերլուծելով դրանք Թուրքիայի արտաքին էներգատրանսպորտային քաղաքականության ռիսկերի ու մարտահրավերների համատեքստում:

Այդուհանդերձ, կարելի է հանգել այն եզրակացության, որ նշված դիտողությունները հիմնականում արվում են առաջարկի տեսքով կամ ունեն պարզաբանման բնութագրիչ և միտված են կատարված ուսումնասիրության արժեքը բարձրացնելուն: Դրանք չեն նսեմացնում այն աշխատանքը, որը կատարվել է հեղինակի

կողմից, քանի որ վերջինս կարողացել է կատարել ի սկզբանե իր առջև դրված հիմնական նպատակն ու խնդիրները:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու շարադրանքի փոխկապակցված տրամաբանությունը, հեղինակի գիտական պատրաստվածությունը, վերջնարդյունք եզրահանգումները՝ գտնում եմ, որ Միքայել Հենրիխի Ավանեսյանի «Թուրքիայի աշխարհառազմավարության էներգատրանսպորտային գործոնը Մեծ Մերձավոր Արևելքում. փոխակերպումները և նոր մարտահրավերները» ատենախոսությունը համապատասխանում է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» (քաղաքական գիտություններ) մասնագիտությամբ գիտական աստիճան հայցելու համար առաջադրվող պահանջներին, իսկ ատենախոսը արժանի է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
պետի՝ կրթության և գիտության գծով տեղակալ - ԱՌՀԻ-ի պետ, գնդապետ,
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Տ.Տ.ՔՈՉԱՐՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոս Տիգրան Քոչարյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի գիտական
քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԶՈՒ պահեստազորի գնդապետ **Զ.Դ.ԱՍԱՏՐՅԱՆ**

09.01.2024թ.